

Ավետիք Իսահակյան

Վարազն ու աղվեսը

Վարազը ժեռուտ քարերի վըրա Անխոնջ եռանդով
Սըրում էր մեկ-մեկ ժանիքներն իրա:
Հեգնող ժպիտով
Աղվեսը նրան հարց արավ, ասաց.
-Ո՛վ կտրիճ եղբայր,
Ո՛չ կովի լուր կա և ո՛չ էլ կասկած,
Ի՞նչ ես վայրապար Ծով-քրտինք մտել ու քեզ չարչարում:
Իսկ վարազն այսպես պատասխան տվավ
-Ամբողջ աշխարհում
Խորամանկ, խելոք
Հաճել ես համբավ,
Բայց խելքըդ, իրոք,
Հավնոցից հեռու չի անցնում բնավ:
Ջինվորը պիտի
Խաղաղության մեջ և ո՛չ թե մարտի
Ջենքերը սրե, և պատրաստ ու կազմ՝
Աչալուրջ լինի:
Գիտցի՛ր, որ ժանգն է ծնել պատերազմ.
Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի
Թշնամին նվազ ախորժակ ունի:

Օգոստոսի 14, Վենետիկ

Յատուկ Պոէմ